



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՈՒՄ

3 փետրվարի 2011 թվականի N 108-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1748-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության մարզերի՝ առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների համար Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից հատկացնել 10,012,000.0 հազ. դրամ, այդ թվում՝

1) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանին՝ 666,000.0 հազ. դրամ՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանին՝ 1,305,000.0 հազ. դրամ՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանին՝ 1,330,000.0 հազ. դրամ՝ համաձայն N 3 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանին՝ 1,135,000.0 հազ. դրամ՝ համաձայն N 4 հավելվածի.

5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանին՝ 1,326,000.0 հազ. դրամ՝ համաձայն N 5 հավելվածի.

6) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանին՝ 1,318,000.0 հազ. դրամ՝ համաձայն N 6 հավելվածի.

7) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանին՝ 1,320,000.0 հազ. դրամ՝ համաձայն N 7 հավելվածի.

8) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանին՝ 720,000.0 հազ. դրամ՝ համաձայն N 8 հավելվածի.

9) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանին՝ 260,000.0 հազ. դրամ՝ համաձայն N 9 հավելվածի.

10) Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին՝ 632,000.0 հազ. դրամ՝ համաձայն N 10 հավելվածի:

(1-ին կետը փոփ. 05.05.11 N 628-Ն, 29.09.11 N 1436-Ն)

1.1. Հայաստանի Հանրապետության մարզպետներին՝

1) մինչև 2011 թվականի դեկտեմբերի 27-ը սույն որոշման 1-ին կետով հատկացված գումարների՝ մինչև 2011 թվականի դեկտեմբերի 26-ը չօգտագործված միջոցները որպես կանխավճար փոխանցել այդ նպատակով գանձապետարանում բացված հատուկ դեպոզիտային հաշիվներին՝ փոխանցումները կատարելով ուղղակի վճարման եղանակով, ներկայացնելով միայն վճարման հանձնարարագրեր.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված փոխանցումներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել ցանկ՝ ըստ օբյեկտների և ծախսատեսակների՝ սույն որոշման հավելվածների ցուցանիշներին համապատասխան:

(1.1 կետը լրաց. 15.12.11 N 1789-Ն)

1.2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝

1) գանձապետարանում բացել հատուկ դեպոզիտային հաշիվներ՝ մինչև 2012 թվականի սեպտեմբերի 1-ը ժամկետով (բացառությամբ սույն որոշման N 4 հավելվածի 2.48-րդ կետով սահմանված աշխատանքի համար, որի համար վերջնաժամկետ է սահմանվում մինչև 2012 թվականի հոկտեմբերի 1-ը), սույն որոշմամբ կատարված հատկացումների ֆինանսավորումը 2012 թվականի ընթացքում իրականացնելու նպատակով:

2) ապահովել սույն կետի 1-ին ենթակետում նշված հատուկ դեպոզիտային հաշիվներից գումարների ելքագրումը՝ սույն որոշման, ինչպես նաև բյուջեների կատարումը սահմանող գործող ընթացակարգերին համապատասխան:

(1.2 կետը լրաց. 15.12.11 N 1789-Ն, 30.08.12 N 1098-Ն)

2. Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1748-Ն որոշման NN 10 և 11 հավելվածներում կատարել լրացումներ՝ համաձայն NN 11 և 12 հավելվածների:

3. Սահմանել, որ սույն որոշման NN 1-10 հավելվածներով նախատեսված աշխատանքների գնումների գործընթացների վրա չեն տարածվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի N 853-Ն որոշման 6.1-ին կետի պահանջները:

4. Հայաստանի Հանրապետության մարզպետներին՝

1) սույն որոշման NN 1-10 հավելվածներում նշված շինվերանորոգման աշխատանքների նախագծային առաջադրանքները կազմել և նախագծանախահաշվային փաստաթղթերը պատվիրել՝ շինվերանորոգման աշխատանքների նախահաշվային արժեքները նախատեսելով սույն որոշման NN 1-10 հավելվածներով այդ աշխատանքների համար նախատեսված գումարներից ոչ ավելի:

2) նախագծանախահաշվային փաստաթղթերը հաստատվելուց հետո, անհրաժեշտության դեպքում, սահմանված կարգով ներկայացնել առաջարկություններ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզպետարանի գծով հատկացված ընդհանուր գումարի սահմաններում աշխատանքների միջև վերաբաշխումներ կատարելու վերաբերյալ:

3) սույն որոշմամբ նախատեսված հատկացումների հաշվին շինարարական աշխատանքների ձեռքբերման ընթացակարգերի կազմակերպման նպատակով նախագծանախահաշվային փաստաթղթերը հաստատվելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն ներկայացնել աշխատանքներն ըստ տիպերի խմբավորելու և դրանց ձեռքբերումը մեկ գնման ընթացակարգով կազմակերպելու վերաբերյալ առաջարկություններ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ հրավերով մասնակիցներին հնարավորություն է տրվում հայտեր ներկայացնելու ինչպես բոլոր, այնպես էլ առանձին չափաբաժինների համար՝ պայմանով, որ գնային առաջարկների համեմատումը կատարվում է ըստ առանձին չափաբաժինների, և յուրաքանչյուր դեպքում տվյալ չափաբաժնի հաղթող է համարվում այն մասնակիցը, որը ներկայացրել է առավել ցածր գնային առաջարկ:

5. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարին՝ իրականացնել վերահսկողություն սույն որոշման կատարման նկատմամբ:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Տ. Սարգսյան

2011 թ. փետրվարի 21
Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՎԱՐՈՒՄԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՏԿԱՅՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

(հազ. դրամ)

NN ը/կ	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների և աշխատանքների անվանումները	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
	ԸՆԴԱՄԵՆԸ	80,000.0	561,000.0	1,175,000.0	1,330,000.0
	այդ թվում՝				
1	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների շինարարություն և հողվածով որից՝	0.0	5,000.0	25,000.0	30,000.0
1.1	գ. Տարունիկի ներքին ջրամատակարարման ջանքի կառուցում	0.0	0.0	20,000.0	25,000.0
1.2	գ. Արարսում (Էջմիածնի տարածաշրջանի) 1 խորքային հորի կառուցում	0.0	5,000.0	5,000.0	5,000.0
2	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում և հողվածով	0.0	476,000.0	1,070,000.0	1,220,000.0
2.1	բ. Արմավիրի թիվ 5 հիմնական դպրոցի հիմնանորոգում	0.0	36,000.0	81,000.0	90,000.0
2.2	գ. Նորապատի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում	0.0	24,000.0	54,000.0	60,000.0
2.3	գ. Շենավանի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում	0.0	24,000.0	54,000.0	60,000.0
2.4	գ. Բերքաշատի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում	0.0	20,000.0	45,000.0	50,000.0
2.5	բ. Վաղարշապատի թիվ 12 հիմնական դպրոցի հիմնանորոգում	0.0	24,000.0	54,000.0	60,000.0
2.6	գ. Արարսի (Էջմիածնի տարածաշրջանի) միջնակարգ դպրոցի հիմնանորոգում	0.0	24,000.0	54,000.0	60,000.0
2.7	գ. Օրսի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում	0.0	20,000.0	45,000.0	50,000.0
2.8	գ. Հայթաղի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում	0.0	28,000.0	63,000.0	70,000.0
2.9	գ. Ջրառատի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում	0.0	24,000.0	54,000.0	60,000.0
2.10	գ. Բազարանի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում	0.0	20,000.0	45,000.0	50,000.0
2.11	գ. Երվանդաշատի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում	0.0	20,000.0	45,000.0	50,000.0
2.12	գ. Հուշակերտի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում	0.0	24,000.0	54,000.0	60,000.0

11_0108

2.13	գ. Արագածի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում	0.0	24,000.0	54,000.0	60,000.0
2.14	գ. Նալբանդյանի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում	0.0	36,000.0	81,000.0	90,000.0
2.15	գ. Արևաշատի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում	0.0	26,000.0	58,500.0	65,000.0
2.16	գ. Գետաշենի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում	0.0	26,000.0	58,500.0	65,000.0
2.17	գ. Լուկաշինի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում	0.0	20,000.0	45,000.0	50,000.0
2.18	գ. Այգեշատի (Արմավիրի տարածաշրջան) մանկապարտեզի հիմնանորոգում	0.0	20,000.0	20,000.0	20,000.0
2.19	բ. Արմավիրի բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգում	0.0	18,000.0	42,000.0	60,000.0
2.20	բ. Վաղարշապատի բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգում	0.0	18,000.0	42,000.0	60,000.0
2.21	բ. Մեծամորի բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգում	0.0	0.0	21,000.0	30,000.0
3	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Նախագծահետազոտական ծախսեր և հողվածով	80,000.0	80,000.0	80,000.0	80,000.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՎԱԶՄԻ
 ԴԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

11_0108